# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» փետրվարի 2020 թվականի № 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի №2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.
Հաստատել համայնքի 2020 թվականի փետրվարի 28-ի № 2 հերթական նիստի օրակարգը.
ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

2. 2019 թվականին համար հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը հաստատելու մասին

3.Համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տալու, պայմանները և վարձավճարի մեկնարկային չափը սահմանելու մասին

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

| | |
|---|---|
| ԱՐԱՐԱՏ | ԱԼԵՔՍԱՆՅԱՆ |
| ՍԵՐԳԵՅ | ԳԵՎՈՐԳՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ | ԵՍԱՅԱՆ |
| ԼԵՎՈՆ | ԹԱՄՐԱԶՅԱՆ |
| ՌԱՆՏԻԿ | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |
| ԳԱՐԻԿ | ՊԵՏՐՈՍՅԱՆ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» փետրվարի 2020 թվականի № 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Խաչփար համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփար համայնքի ավագանու 2020 թվականի

փետրվարի 28 -ի № 5 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2019թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 48 298.9 | 50 199.7 | 104 |
| Հողի հարկ | 4 320.0 | 4 344.9 | 101 |
| Գույքահարկ | 4 750.0 | 5 580.6 | 117 |
| Տեղական տուրք՝ ընդամենը | 340.0 | 552.5 | 162 |
| Համայնքային հողերի օգտագործման վարձավճար | 416.8 | 427.1 | 102 |
| Տեղական վճարներ | 3 000.0 | 3 422.1 | 114 |
| Պետական բյուջեից տրվող դոտացիա | 33 222.1 | 33 200.1 | 100 |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | 2 250.0 | 2 672.4 | 119 |
| Ֆոնդային բյուջե | 24 510.2 | 24 988.0 | 102 |
| Եկամուտներ: Ընդամենը | 72 809.1 | 75 187.7 | 103 |

| ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2019թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 48 298.9 | 42 190.7 | 87 |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ Պետական կառավարում 01.1.1 | 20 806.0 | 18 268.4 | 88 |
| Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ 01.3.1 | 50.0 | - | - |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3 | 170.0 | 163.2 | 96 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01.6.1 | 1 410.0 | 342.0 | 24 |
| Ոռոգում 04.2.4 | 2 750.0 | 2 564.8 | 93 |
| Աղբահանում 5.1.1 | 1 500.0 | 1 390.0 | 93 |
| Ջրամատակարարում 06.3.1 | 5 807.9 | 5 807.0 | 100 |
| Փողոցային լուսավորում 06.4.1 | 300.0 | 299.7 | 100 |
| Գրադարան 8.2.1 | 1 235.0 | 514.0 | 42 |
| Նախադպրոցական կրթություն 9.1.1 | 12 000.0 | 10 911.5 | 91 |
| Միջնակարգ ընդհանուր կրթություն 9.2.2 | 100.0 | - | - |
| Սոցիալական հատուկ արտոնություններ 10.7.1 | 2 170.0 | 1 930.0 | 89 |
| Ֆոնդային բյուջե | 24 510.2 | 8 020.1 | 33 |
| Ընդամենը | 72 809.1 | 50 210.8 | 69 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2020 թվականի № 6

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել 2019 թվականին հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփար համայնքի ավագանու 2020 թվականի

փետրվարի 28 -ի № 6 որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի հնգամյա զագացման ծրագրում 2019 թվականին ընդգրկված էր Խաչփար համայնքի 2-րդ, 4-րդ և 7-րդ փողոցների խմելու ջրագծերի շինարարության ծրագիրը, որի նախահաշվային արժեքը կամել է 5 807.9 հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1073-Ն որոշմամբ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հրատապ ծրագրերի իրականացման շրջանակում աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է մրցույթ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Խաչփար համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել են համայնքի 2-րդ, 4-րդ և 7-րդ փողոցների խմելու ջրագծերը և ապահովել որակյալ խմելու ջուր՝ սանիտարական բոլոր նորմերին համապատասխան:

Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է 2019 թվականին հնգամյա ծրագրով նախատեսված Խաչփար համայնքի 2-րդ, 4-րդ և 7-րդ փողոցների խմելու ջրագծերի վերակառուցման ծրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«28» փետրվարի 2020 թվականի № 7

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարած փոփոխությունները և նշված գույքը մուտքագրել համայնքապետարանի հաշվեկշռում:

1. համակարգիչ intel G 5400/ASUS Prime /1 հատ154 000 դրամ/,

2. մոնիտոր LG 22 MP 480 P 22 /1 հատ 65 000 դրամ/,

3. անխափան սնուցման սարք FP 650 / 1 հատ 22 000 դրամ/,

4. բազմաֆունկցիոնալ սարք HP Lasarjet Pro MFP M 130 a / 1 հատ 79 000 դրամ/:

Ընդամենը՝ 320 000 դրամ:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարի 2020 թվականի № 8

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին տալ վարձակալության՝

03-050-0213-0013 ծածկագրով 1.9 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0210-0021 ծածկագրով 0.1 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0210-0011 ծածկագրով 0.34 հա 4-րդ կարգի ջրովի,

03-050-0114-0013 ծածկագրով 0.13 հա 2-րդ կարգի ջրովի,

գյուղատնտեսական նշանակության հողամասերը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Հողամասերի վարձավճարի մեկնարկային չափը սահմանել տվյալ կարգի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասար:

3. Վարձակալության ժամկետը սահմանել երեք տարի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ